«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը մայրենիի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Ծատուրյան

Ուսումնական հաստատություն՝ Ն.Վ. Գոգոլի անվան հ. 35 հիմն. դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն----------3

2. ԳԼՈՒԽ 1

Ինտեգրված ուսուցումը որպես ավանդական առանձին

առարկաների համատեղում----------4

3.ԳԼՈՒԽ 2

Ինտեգրված ուսուցման յուրահատկությունները և

տեսակները----------6

4.Հավելված/դասի պլան/----------16

5.Եզրակացություն----------18

6.Գրականության ցանկ----------19

Ներածություն

Այսօր աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները կրթական ոլորտում ևս նորարարություններ են ենթադրում, իսկ սովորողներից պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու հմտություններ: Այդ հմտություններին հասնելու համար միայն առարկայական գիտելիքները բավարար չեն, ուստի արդիական պահանջ է առաջանում մշակել նոր և բազմակողմանի մոտեցումներ, ինչպես նաև կիրառել հետաքրքիր մեթոդներ դասերն ավելի արդյունավետ դարձնելու համար: Այս ժամանակակից մեթոդները պետք է համապատասխանեն կյանքի առաջընթացին և ուսուցման համար առաջադրվող նոր պահանջներին՝ կատարելագործելով դրանք:

Ներկայումս անհրաժեշտ է սովորողների մեջ զզարգացնել արժեքային նոր որակներ՝ համակեցություն, հանդուրժողականություն, համագործակցություն, թիմային մտածողություն:

Արդի իրականության մեջ սովորողներն են են թելադրում նոր ձևաչափով անցկացնել դասը, որպեսզի այն չլինի ձանձրալի և միապաղաղ: Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիակայի նորույթներից է և լայն տարածում է գտել աշխարհում:

Ուսումնասիրության առաջնային **նպատակն** է պատասխանել հետևյալ հարցին՝

1. **Արդյոք ինտեգրումը անհրաժեշտ և արդյունավետարդյունավետ է ուսումնառություն իրականացնելիս:**

Հետազոտության նպատակն է ցույց տալ, որ ինտեգրումը լուծում է հետևյալ **խնդիրները՝**

1) նպաստում է է սովորողների գիտելիքների բազմակողմանի հարստացմանը

2)օգնում է հետազոտական հմտությունների զարգացմանը, որոնք կօգտագործվեն ժամանակի հրամայական դարձած նախագծային ուսուցման ժամանակ

3) նպաստում է անձնային հարաբերությունների զարգացմանը

Այս թեմայի ուսումնասիրության վերջնարդյունքում ակնկալում ենք ձեռք բերել փորձառություն, որը հնարավորություն կտա հասնելու մասնագիտության մեջ նոր որակական մակարդակի, իսկ աշակերտներին ուղղորդել՝ զարգացնելու հմտություններ, ունակություններ, քննադատական վերլուծություն ու ստեղծագործական մտածողություն:

ԳԼՈՒԽ 1

Ինտեգրված ուսուցումը որպես առանձին առարկաների համատեղում

Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդումը ստեղծում է արհեստական պատնեշներ և սովորողները աշխարհի մասին ունենում են ոչ ամբողջական, այլ մասնատված պատկերացումներ: Ուսուցման այդ ձևը արդեն իսկ արդյունավետ չէ, ուստի, որպես լուծում, առաջարկվում է ինտեգրված ուսուցումը, որի հիմնական խնդիրն է ձևավորել միասնական մոտեցում երևույթի ընկալման, գիտակցման ու յուրացման հանդեպ: Երբ ուսումնական ծրագիրը տեղափոխում ենք մարդկային կենսափորձի պայմաններ, ակնհայտ է դառնում, որ այն նոր իմաստ է ստանում: Եթե աշակերտը դպրոցում ստանում է կտրված գիտելիքներ, նա չի կարողանում իրական կյանքում հանդիպող խնդիրները նույնացնել դասարանում հանդիպածների հետ: Իսկ ինտեգրված դասը սովորողի մոտ ձևավորում է այնպիսի աշխարհայացք, որն ի վիճակի է կապակցել իրականության տարբեր երևույթները, նկատել ժամանակի, տարածության, գործողությունների, հասկացությունների միջև կապը, զարգացնել հմտություններ, հասկանալ դրանց ազդեցությունները միմյանց վրա, ձևավորել վերաբերմունք և արժեհամակարգ:

Այսպիսի դասերը հանրային կրթության այն ձևերից են, որոնք իրենց մեջ են միավորում մի քանի առարկաների ուսումնական նյութերը միաժամանակյա ուսուցման ժամանակ: Այդպիսի դասերի ժամանակ ուսումնական նյութերը և՛ իմաստով, և՛ ձևով պետք է փոխադարձ հարաբերության մեջ գտնվեն և լրացնեն իրար՝ կազմելով մեկ ամբողջություն:

Ինտեգրված ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից ստացած գիտելիքները հենվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից ձեռք բերված գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

«Ինտեգրված ուսուցումը ներառում է ավանդական առանձին առարկաների համատեղումը, ինչը հնարավորություն է տալիս նյութի ճիշտ և հեշտ հասկանալուն[1]»:

Ինտեգրված ուսումնական ծրագրեր կազմելիս մանկավարժները պետք է պատասխանեն կրթությանը վերաբերող երեք կարևոր հարցերի, որոնց պատասխանները մեզ տանում են դեպի **գիտենալ-անել-լինել եռամիասնության ստեղծմանը**.

1.Ի՞նչն է այն ամենակարևորը, որ աշակերտները պետք է **գիտենան:**

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

2.Ի՞նչն է այն ամենակարևորը, որ աշակերտները պետք է **կարողանան անել:**

3.Ինչպիսի՞ անձնավորություն ենք մենք ցանկանում, որ աշակերտները **լինեն**:

Այսպիսի դասեր իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր և ճիշտ մոտեցումներ: Հարկավոր է հետևողական գտնվել ուսուցիչների փոխգործունեության կազմակերպման գործում, պլանավորել գործողությունների հաջորդականության ընթացք՝ հաշվարկելով օգտագործվող ժամանակի արդյունավետությունը և կազմելով դրան համապատասխան օրվա դասի պլան, որը պետք է լինի համատեղ աշխատանքի արդյունք:

Սովորաբար առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հարստացմանը:

Սակայն սա չի պարտադրում քարացած մոտեցում: Յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք: Սովորաբար առաջատար առարկայի ուսուցիչը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը կամ մյուսները կատարում են ակտիվ հյուրի դեր՝ ներգրավելով ուսուցման կազմակերպմանն ու անցկացմանը: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, փոխել ուսումնասիրության շրջանակները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձը ու դրա ըմբռման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, որպեսզի սովորողները թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման ժամանակ ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվեն նյութերում:

Այսինքն, ուսումնական ծրագրի ինտեգրումը վերացնում է դասաժամերի ու առարկաների միջև եղած սահմանափակումները՝ հնարավորություն ընձեռնելով սովորողներին հետաքրքրությամբ ներգրավել դասապրոցեսին, ցուցաբերել ակտիվ մտածողություն և ստեղծարարություն

Անկասկած, դասն այսպիսի եղանակով անցկացնելը թույլ է տալիս ավելի արդյունավետ օգտագործել աշխատանքային ժամը՝ վերացնելով կրկնությունները, խորացնել նյութի ուսումնասիրությունը՝ առանց լրացուցիչ ժամանակային ծախսերի: Ինտեգրված դասի ընթացքում երկու կամ ավելի ակադեմիական առարկաների դիդակտիկ խնդիրները լուծվում են միաժամանակ:

ԳԼՈՒԽ 2

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ինտեգրված դասի ժամանակ ցանկալի է, որ աշակերտները աշխատեն խմբերով, որտեղ նրանց հնարավորություն կընձեռվի կիսվել գաղափարներով, փոխանակել տեղեկություններ, համադրել ստացված գիտելիքները և որոշումներ կայացնել: Այսպիսի դասերի ժամանակ հարմար է կիրառել «Մտքերի տարափ», «Պրիզմա», «Խմբային հետազոտություն», «Շրջագայություն պատկերասրահում» և այլ մեթոդներ: Խմբային աշխատանքը շատ արդյունավետ է, քանզի ակնհայտ է, որ արագ տեմպերով փոխվող ու զարգացող աշխարհում, որտեղ տեղեկատվությունն ու գիտելիքը ձևավորում են մեր աշխարհայացքը, մարդիկ ակնհայտորեն կարիք են ունենում աշխատել խմբերով:

Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգի վրա, ուստի այս մեթոդների կիրառումը նպտակ ունի սովորողների մտավոր ու զգայական կարողությունները ընդլայնել, նպաստել ինքնուրույնության և այլ հմտությունների զարգացմանը: Խմբային աշխատանքը նպաստում է անհատի համագործակցային գործունեության ակտիվ զարգացմանը՝ դարձնելով նրան ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ: Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, այլև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը:

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել զանազան մեթոդներ: Մեթոդի ընտրությունը պետք է բխի դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների թվաքանակից ու տարիքային առանձնահատկություններից, նրանց շահագրռվածությունից ու պատրաստվածության մակարդակից և այլն:

Նախապատրաստական աշխատանքներում ուսուցիչը որոշում է.

1. ինտեգրված դասի անցկացման դրդապատճառներն ու նպատակները
2. այն առարկայի ներգրումը, որը կօգնի հանգամանալից քննելու հուզող թեման, հասկացությունը կամ գաղափարը
3. ինտեգրման ձևը
4. ինտեգրման մեթոդը
5. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը
6. նյութի ներկայացման միջոցները
7. առարկաների միջև առաջատարի և երկրորդականի առանձնացումը
8. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև

9. սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները
10. առանցքային թեման, հասկացությունը, որի շուրջ կառուցվելու է դասը
11. գնահատման ձևերը

Ինտեգրման դեպքում հավասարապես ներգրավում են առարկաները՝ գերակայությունը տալով մեկ առարկային, իսկ մյուսները դառնում են օժանդակող առարկա: Կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90 րոպե): Ինտեգրված դասի արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչային եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Ուսուցիչը պետք է պարզ և հստակ կերպով ձևակերպի դասի նպատակը՝ հավաքելով մեկ դասում միավորվող ուսումնական նյութը: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ:

«Աշակերտներին հիմնական գիտելիքներ տալուց և համապատասխան հմտություններ զարգացնելուց բացի՝ դպրոցները ևս մեկ այլ պարտավորություն էլ ունեն. նրանք աշակերտներին պետք է նախապատրաստեն ապրելու ժողովրդավարական հասարակարգում: Ուսումնական ծրագրի ինտեգրումը շատ ավելին է, քանի որ ժողովրդավարական հասարակության կյանքին արդյունավետ կերպով մասնակցելու համար անհրաժեշտ հմտություններ է զարգացնում[2]»:

Ելնելով ինտեգրված դասի տեսակից՝ ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները, զուգակցում մասնավորը ընդհանուրի հետ, շաղկապում ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Տարբերակվում են է ինտեգրված ծրագրերի հետևյալ տեսակները՝

1.Բազմառարկայական (multidisciplinary)
2.Միջառարկայական (interdisciplinary)
3.Վերառարկայական (transdisciplinary)

Բազմառարկայական մոտեցման դեպքում վերցվում է թեման, ընտրվում են այն առարկաները, որոնք անդրադառնում են տվյալ թեմային՝ դասավանդման ընթացքում ուսումնասիրելով երևույթը տարբեր գիտությունների ընկալումների տեսանկյունից:

Ուսուցիչները, առաջնորդվելով այս մոտեցմամբ, առարկաների չափորոշիչները մշակում են մի թեմայի շուրջ՝ կարևորելով տարբեր առարկաների շրջանակներում սովորողների ստացած գիտելիքները: Այս մոտեցման դեպքում առաջատար առարկայի ուժեղ կողմերը չեն շեշտվում, քաջալերվում է գիտելիքների տարբեր բնագավառների միջև կապերի հաստատումը:

[2] Մ. Դավթյան, Ք. Գրիգորյան, Ա. Արնաուդյան, Ա. Զոհրաբյան, Գ. Հովհաննիսյան, Ի. Օհանովա, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2007, էջ 64:

Միջառարկայական մոտեցման դեպքում ուսումնասիրվող թեման դառնում է դասավանդման առանցքը, որին տարբեր առարկաներ մատուցում են իրենց արդյունքները: Ի տարբերություն բազմառարկայական մոտեցման՝ այս դեպքում շեշտը առանձին առարկաների թեմաներից

տեղափոխվում է դեպի այդ առարկաների համար ընդհանրական թեմաները և կենտրոնանում առարկաների ընդհանրությունների վրա:

Վերառարկայական մոտեցման դեպքում թեման դուրս է գալիս առարկաների սահմաններից՝ լիովին ջնջելով առանձին առարկաների սահմանները: Նման ինտեգրում է տեղի ունենում, օրինակ, նախագծային ուսումնառության դեպքում, երբ սովորողները հետապնդում են կոնկրետ խնդիր: Ուսուցիչները ուսումնական ծրագիրը մշակում են աշակերտների հարցերի և հետաքրքրությունների հ Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել:

Մայրենիի միասնացված դասընթացի միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակների մեկը, այն է՝ «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթ տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը» [3, 1]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 12 տարեկան երեխան դեռևս ֆիզիկապես և հոգեպես բավարար չափով պատրաստ չէ երևույթներն անջատ-անջատ ընկալելու: 11-12 տարեկանը դեռ չի «առանձնացել» իր Ես-ի հետ, իրեն դեռ բավականին չի ճանաչում [4, 50]: Քանի որ սա հենց այն տարիքն է, երբ երեխան սկսում է զգա իր բարոյական էությունը, սկսում է ձևավորվել երեխայի անձը հետևաբար ինքն իրեն ճանաչելով մարդկանց հետ ունեցած կենդանի հարաբերություններով, իրականության մեջ աստիճանաբար իր տեղը փնտրելով, նոր ապրումներ ու զգացողություններ ունենալով է, որ պիտի գիտակցի իր ով լինելը:

Անշուշտ, 5-6-րդ դասարաններում մայրենի լեզվի միասնացված ուսուցմամբ կրթական ծրագրերի իրականացումն առաջին հերթին պայմանավորված է 10-12 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկություններով: Վաղ դեռահասության տարիքում, երբ երեխան ունի իմանալու, կարողանալու, խոսելու, տեսնելու, զգացածն արտահայտելու բուռն ցանկություն, նրան լեզվագիտության և գրականագիտության բարդ աշխարհ տանելով՝ կարող ենք խոչընդոտել հետագա առաջընթացը: Իսկ տարիքային հաջորդ շրջանում, «երբ դեռահասը դուրս է գալիս իր

պատյանից», սկսում է իրեն և շրջապատը առանձին-առանձին դիտարկել, տարանջատվում են նրա ընկալումները, հայացքն էլ սկսում է սևեռվել կոնկրետություններին, ամբողջից նա սկսում է առանձնացնել իրեն և իրերը, ուրեմն և պատրաստ է երևույթներն ուսումնասիրել առանձին-առանձին» [4, 50]:

Ուստի այս տարիքի երեխաների հետ բարձրարժեք, բայց փոքրածավալ գրական երկերի վերլուծությամբ լեզվական իրողությունները սեփական խոսքում գործնականորեն կիրառելու հնարավորություն ենք ընձեռնում, որով էլ իրագործվում են կրթական պարտադիր փաստաթղթերով սահմանված ակադեմիական նպատակադրումները՝ աշակերտների համագործակցային, հաղորդակցական, ստեղծագործական կարողությունների և ինքնուրույն բանավոր ու գրավոր խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը:

Վիգոտսկու պատկերավոր խոսքով ասված՝ երեխայի հետաքրքրությունը համապատասխան չափով և պահանջված ժամանակահատվածում ձեռք բերած գիտելիքը կարելի է համարել «բարենպաստ ջերմաստիճան»: Ըստ հայտնի մանկավարժի՝ ինչպես մարդու բնականոն ջերմաստիճանը 36,6 աստիճանն է, և երբ այն բարձրանում է, կարող է խանգարվել նրա նորմալ կենսագործունեությունը, այնպես էլ երեխայի «կրթական ջերմաստիճանը» պետք է պահել խելամիտ չափի սահմաններում, այլապես կարող են խաթարվել ուսման նկատմաբ նրա սերն ու ձգտումը, ֆիզիկական և հոգևոր զարգացումը [7, 368]:

Ասվածից պարզ է դառնում, որ միջին դասարանների մայրենիի բովանդակությունն ու կառուցվածքը, սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, ենթադրում են զուտ գործնական ուղղվածություն երեխայի հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակներից բխող ուսումնական բնագրի վրա տարվող աշխատանքներով:

Այժմ միջին դպրոցի մայրենիի 5-6-րդ դասարանների միասնացված (ինտեգրված) ուսուցմամբ դասագրքերով տարվող աշխատանքը սովորողների առաջ բացում է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և դրանց կիրառման նոր հնարավորություններ: Մայրենիի դասագրքերում դասը ներկայացված է համալիր եղանակով՝ մեկ ամբողջության մեջ ներառելով ընթերցանության նյութը, գրականագիտական տեղեկությունները, տեքստի վրա կատարվող աշխատանքը, լեզվական գիտելիքը և համապատասխան գործնական վարժությունները: Միասնացված դասն առաջին հերթին ապահովում է քերականության և կենդանի լեզվի կապը, որը կարևոր նշանակություն ունի 5-6-րդ դասարաններում նախատեսված ծրագրային նյութի սահմաններում՝ հնչյունաբանությունից և բառագիտությունից ուսուցանվող լեզվական հասկացությունների գործնական արժեքը ընդգծելու համար: Մյուս կողմից էլ՝ մայրենիի միասնացված ուսուցմամբ լայն հնարավորություն է բացվում սովորողի սոցիալական հմտությունների զարգացման համար՝ նրան վարժեցնելով հետազոտական, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ կատարելու:

Նշված սկզբունքով ուսուցման նպատակներին հասնելու համար ժամանակի հրամայական է դառնում նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությունը և՛ ներառարկայական, և՛ միջառարկայական ինտեգրման շրջանակում:

Հայոց լեզվի և գրականության ինտեգրմանը զուգահեռ ուսուցման արդյունավետությանը խիստ նպաստում է հարակից առարկաների, արվեստի ճյուղերի համադրմամբ նյութի մատուցումը: Եթե ընթացիկ ծրագրային դասանյութն ունի աշխարհագրության, հայրենագիտության, պատմության, երաժշտության, արվեստի մյուս բնագավառների հետ աղերսներ, ապա նյութի դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա:

Դիտարկենք հետաքրքիր մի հանձնարարություն, երբ ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները կարդում են բանկար կամ նկարագրություն պարունակող երկը, վերլուծում, դատողություններ անում և լրացնում «Քառաբաժան» աղյուսակը:

Օրինակ՝ 6-րդ դասարանի աշակերտները Վ.Դավթյանի «Լիճը» [2, 122] բանաստեղծության վերլուծությամբ «Քառաբաժան» աղյուսակը լրացնում են այսպես.

Ի՞նչ տեսա:	Ի՞նչ լսեցի:	Ի՞նչ զգացի:	Նոր վերնագիր:
Կապույտ ու սպիտակ գույներ, ճայեր, աստղեր, լեռներ, արև…	Պատարագի մեղեդի, ճայերի ձայներ,ալիքների ծփանք…	Երանություն, մաքրության բերկրանք, հաճույք, անապի երջանկություն…	«Կապույտ երազ», «Պատարագ»

Նյութի մատուցման հաջորդ փուլում աշակերտները կերպարվեստի ուսուցչից հանձնարարություն են ստանում նկարելու և գույների օգնությամբ ամբողջացնելու բնագրի մեջ ամփոփված մտքերը, ապա լրացրած աղյուսակի ու բանավոր վերլուծության շնորհիվ դասանյութը վերարտադրել նկարելով:

Նույն սկզբունքով կարելի է ուսումնասիրել Ավ.Իսահակյան «Գետակի վրա», Վ.Տերյանի «Աշնան», Հովհ. Շիրազի «Գարնանամուտ», Վ.Դավթյանի «Զվարթնոցի արծիվը», Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» և այլ բանաստեղծությունները:

Այսպես, ինտեգրման մեթոդով կերպարվեստի հետ միջառարկայական կապ հաստատելով՝ նպաստում ենք սովորողների կողմից գրական երկի նյութի տեսանելի զգայական ընկալմանը աշակերտը կարդում է հատվածաբար, այն վերածում նկարի, ընտրում բնագրից բխող գույներ, ավելացնում ստեղծագործական ինքնուրույն երանգներ, բանավոր խոսքով հիմնավորում նկարն ու բնագիրը:

5-6-րդ դասարանների մայրենիի դասագրքերում շատ են բանաստեղծությունները, որոնք երգի են վերածված: Օրինակ՝ Ավ.Իսահակյանի «Գետակի վրա», Ս.Շահազիզի «Երազ», Պ.Սևակի «Էրեբունի-Երևան»: Կան ստեղծագործություններ, օրինակ՝ Մ.Գալշոյանի «Կռունկ»,

Շ.Ազնավուրի «Ազնավուրը Ազնավուրի մասին», որոնք հնարավոր չէ ուսումնասիրել առանց երաժշտությունն ունկնդրելու, ստացած տպավորությունները մեկնաբանելու:

Երաժշտության ազդեցությամբ նյութի յուրացումը առավել արդյունավետ է դառնում, քանի որ ստեղծվում է զգացմունքային տրամադրվածության անկաշկանդ հոգեբանական մթնոլորտ, ուր գործի են դրվում երեխաների զգայարանները: Առանձին դասանյութեր՝

Ա.Բիտովի «Մատենադարան», Ա.Այվազյանի «Պոեմ վասն շենքի շինության», Ա.Պարսամյանի «Լռություն է» ստեղծագործությունները, ներառարկայական կապ ունեն ճարտարապետության, հայկական խաչքարերի պատմության հետ, որոշ նյութեր՝ Վ.Խեչումյանի «Գլուխգործոց», Վ.Պետրոսյանի «Էսքիզներ»՝ մանրանկարչության, «Նոյի տապանը Արարատի վրա», Մ.Սարգսյանի «Գրիգոր Նարեկացի»՝ հայ եկեղեցու պատմության, Հ.Բեկնազարյանի «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»՝ կինոարվեստի, Մ.Խորենացու «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Ծնուն Վահագնի», Փ.Բուզանդի «Արշակ և Շապուհ»՝ հայ ժողովրդի պատմության, ավանդազրույցների հետ: Այդ առարկաների ուսուցիչների հետ համատեղ տրվող և վերահսկվող առաջադրանքներ լուծում են թե՛ լեզվական, թե՛ գրականագիտական, թե՛ ընդհանուր ու համակողմանի զարգացման բազմաբնույթ կարևոր հարցեր:

5-6-րդ դասարանների դասագրքերում շատ են այնպիսի դասանյութերը, որոնք հնարավոր չէ անցնել առանց աշխարհագրության հետ միջառարկայական կապեր ստեղծելու: Օրինակ՝ Վ.Դավթյանի «Լիճը», Վ.Անանյանի «Սևանա լիճը», Մ.Ղուկասյանի «Ո՞ւր է կղզյակը Սևանա», «Սևանա լիճը ըստ հանրագիտարանի»,

Ս.Կուրտիկյանի «Գեղամա լեռներ, Գեղամա ծով», «Նոյ նահապետի տապանը Արարատի վրա» (ըստ Աստվածաշնչի):

Հետաքրքիր է առաջադրանքի այն ձևը, երբ ուսուցիչը պահանջում է համացանցից ՏՀՏ-ների կիրառմամաբ կամ «Աշխարհագրություն» առարկայի դասընթացից ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ այն զուգորդելով արձակ կամ չափածո երկի կամ կտավի հետ, ինչի արդյունքում հնարավոր է դառնում ինտեգրել այս երկու առարկաները, որի շնորհիվ աշակերտին հաղորդվող աշխարհաճանաչողական տեղեկությունները սովորողի մեջ համապարփակ պատկերացումներ են ձևավորում կոնկրետ երևույթի կամ բնագավառի վերաբերյալ՝ նրան տալով կյանքում պիտանի և պահանջված գիտելիք, ինչին աշակերտը հասնում է հետազոտական աշխատանք կատարելու ճանապարհով: Մայրենիի դասընթացում ներառարկայական ինտեգրման արդյունավետությանը նպաստող պայման է ժամանակակից կամ

ինտերակտիվ մեթոդների ու մեթոդական հնարների կիրառումը: Այսպես, 6-րդ դասարանում **Վ.Անանյանի «Սևանա լիճը»** պատմվածքն անցնելիս ուսուցիչը հանդիպադրման հնարի կիրառմամբ պահանջում է Սևանա լիճը ներկայացնել T-աձև աղյուսակով՝ առանձնացնելով լճի

գիտական բնութագիրը՝ ըստ հանրագիտարանի, և գեղարվեստական բնութագիրը՝ ըստ Վախթանգ Անանյանի:

Սևանա լիճ	
Գիտական խոսք	***Գեղարվեստական խոսք***
Տեղեկատվության ճիշտ հաղորդում: Շատ են թվերը, փաստերը, գիտաբառերը: Չկա հույզ, զգացմունք:	Մեծ է հուզական ներգործությունը: Բառերով նկարելու, պատկերներ ստեղծելու հնարք է օգտագործվել: Զգալի է պատկերավորման արտահայտչականության միջոցների առատությունը:

Այսպիսի աշխատանքը արդյունավետ է և փորձով հիմնավորված: Եվ, որպես ուսուցման վերջնարդյունք, 6-րդ դասարանի աշակերտներն ուսուցչի օգնությամբ կբանաձևեն գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները:

Ինչ խոսք, մայրենիի դասագրքերում ինտեգրված դասանյութերը ուսուցչի ստեղծագործական մտքի դրսևորման համար լայն ասպարեզ են բացում, քանի որ յուրաքանչյուր նյութի ուսուցման ընթացքում ուսուցիչն ինքն է որոշում, թե տվյալ բնագրի շրջանակներում ինչ տիպի ինտեգրում պիտի կազմակերպի՝ դրանով իսկ պարարտ հող նախապատրաստելով ակտիվ ուսումնառության համար: Սակայն դասանյութերում հաճախ հանդիպող թերություններից է բնագրերի մեջ լեզվական նյութի հետ առնչվող կենդանի խոսքում հանդիպող խոսքային միավորների սակավությունը, և որպես դրա ուղղակի հետևանք՝ այն վարժություններն ու առաջադրանքները, որոնք չեն բխում երեխաների՝ այս տարիքային խմբին հետաքրքրող նախասիրություններից, ժամանակակից երեխային զարգացնող թեմաներից, ուստի դրանց հանձնարարում աշակերտների համար դառնում է ձանձրալի և ոչ այնքան օգտակար զբաղմունք:

Կարծում եմ՝ այս բացն անհրաժեշտ է լրացնել այժմ կրթության մեջ լայն կիրառում գտած ու ժամանակի հրամայական դարձած կրթական գործիքներից մեկի՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների՝ լեզվական նյութի հետ ինտեգրելու միջոցով:

Մայրենիի միասնացված դասերին լեզվական նյութի արդյունավետ յուրացման լավագույն գործիքներից մեկը ՏՀՏ-ների գործադրմամբ ինտեգրման ապահովումն է:

Լեզվական նյութի ուսուցման ժամանակ համակարգիչների կիրառումը ոչ միայն տեղին է ու նպատակահարմար, այլև ուսուցման այս ձևի հիմքում դրվում են երեխայի հետաքրքրությունն ու դրա բավարարման ժամանակակից պահանջմունքը: Այս տեսակետից բացառիկ են ինտեգրման մեթոդով ստեղծված համակարգչային խաղերն ու վարժությունները, որոնք թույլ են տալիս երեխայի մեջ զարգացնել վերացական, տրամաբանական մտածողություն, վերլուծելու և կանխատեսելու հստակ հնարավորություններ: /Ինտեգրման փորձի լավ օրինակներ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ https://scratch.mit.edu/projects/297209374/ :/

Ի տարբերություն կինոնկարների և հեռուսատատեսության՝ համակարգչային խաղերով խաղացողը դառնում է գործողությունների մասնակից և ինքն է որոշում դեպքերի հետագա ընթացքը: Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման մեջ դառնում է մշակույթի իրական մասնիկ, և ժամանակակից դպրոցներում դրանց ներդրումը ու անխուսափելի է:

Այսպիսով, մայրենիի միասնացված դասերի ինտեգրման առանցքում առաջնահերթությունը պիտի տրվի սովորողի սոցիալականացմանն ուղղված առաջադրանքներին, քանի որ այդ կերպ կազմակերպված ուսումնառությամբ յուրաքանչյուր սովորողի յուրացրած գիտելիքները դառնում են անձի ձևավորման և կայացման կարևոր նախապայման: Ուստի ինտեգրման մեթոդաբանությամբ ուսուցանվող մայրենիի միասնացված բնագրերը դադարում են զուտ պասիվ ուսումնական նյութ լինելուց, քանի որ դրանք ուսուցչի երևակայական մտածողությունը գործի դնելու, լեզվական կենդանի օրինակներ մտածելու և ուսումնական որոշ առարկաների հետ ինտեգրելու միջոցով լայն հնարավորություն են ընձեռնում յուրաքանչյուր աշակերտի արդիական պահանջմունքներից բխող ուսուցում կազմակերպելու համար:

Ինտեգրված դասեր վարելով մենք կունենանք հետևյալ վերջնարդյունքները՝

- Աշակերտները կզարգացնեն քննադատական վերլուծության ու ստեղծագործական մտածողության կարողությունները
- Կվերլուծեն հասանելի տեղեկությունը, կգնահատեն փաստարկները
- Կհայտնեն սեփական տեսակետ՝ դրսևորելով բարեկրթություն և զսպվածություն
- Կգնահատեն երկի բովանդակություն իմացությունը և գաղափարական ըմբռնումը որպես ինքնաճանաչողական, սեփական անձի, աշխարհայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման կարևոր պայման:

• Կգիտակցեն, որ իրենք պատմամշակութային արժեքների ժառանգորդն են՝ դրսևորելով պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման, զարգացման, արժևորման գոհեծում

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ <<ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ>> ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Դասապլանի ձևով ներկայացնում եմ հինգերորդ դասարանում Հ. Շիրազի <<Գարնանամուտ>> բանաստեղծության ինտեգրված դասավանդման իմ փորձը: Առաջադրել եմ մեթոդներ ու հնարներ, որոնց օգտագործումը կօգնի ուսուցիչներին առավել արդյունավետ մատուցել ուսումնական նյութը :

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի նպատակները

1.սովորեցնել՝ սահուն, արտահայտիչ և առոգանությամբ ընթերցել բանաստեղծությունը, մի շարք բառերի ճիշտ ուղղագրությունն ու արտասանությունը, նոր բառեր, բառակապակցություններ, հոմանիշ-հականիշների նոր զույգեր:

2.Զագացնել աշակերտների բառապաշարը, բանավոր և գրավոր խոսքը, վերլուծելու , համեմատելու, դատողություններ և եզրակացություններ անելու կարողությունները:

3.Ծանոթացնել Հովհաննես Շիրազի կյանքին և ստեղծագործությանը, Ս. Բոտիչելլիի կտավներին՝ մասնավորապես <<Գարուն>> կտավին:

4.Աշակերտների մեջ դաստիարակել սեր, հոգատարություն բնության նկատմամբ, այն պահպանելու և պաշտպանելու ձգտում, իսկական բնապահպան լինելու գաղափարը և պարտականությունները:

5.Վերլուծական ևստեղծագործական **կարողունակությունների զարգացում: <u>Դասի կահավորումը -</u>** Հ. Շիրազի դիմանկարը, Բոտիչելլիի<<Գարուն>> կտավը

ՏՀՏ գործիքներ (համակարգչային տեսանյութ գարնան մասին, երգեր՝ Հ. Սահյանի խոսքերով <<Գարուն է գալիս>>երգը):

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ՝ երաժշտություն, կերպարվեստ/արվեստ/, բնագիտություն, աշխարհագրություն:

15 րոպե նաապատրաստական աշխատանք, հարցում:

Դասի ընթացքը/ԽԻԿ/

Խթանում - 1.Հնչում է <<Գարուն է գալիս>>երգը:

2. Այնուհետև ցուցադրվում է Բոտիչելլիի <<Գարուն>> նկարը, և աշակերտները սկսում են պատմել կտավի բովանդակությունը:

3.Ուսուցիչը ներկայացնում է , որ դա Բոտիչելլիի հայտնի <<Գարուն>> կտավն է. հակիրճ ծանոթացում:

4.Այնուհետև աշակերտների ուշադրությունը հրավիրվում է Շիրազի դիմանկարին. հարցերի միջոցով մնացորդային գիտելիքների վեր հանում և ավելի մանրամասն ծանոթացում կյանքին և ստեղծագործությանը:

Ուսուցիչ- Ի՞նչ եք հասկանում գարնանամուտ ասելով (մտքերի տարափ):



Իմաստի ընկալում:1. Վերհիշել բնության հետ վարվելու կանոնները, կրկին անդրադարձ <<Կարմիր գրքին>>:

2.Ի՝նչ բանաստեղծություններ կամ պատմվածքներ գիտեք տարվա եղանակների մասին/Լսել աշակերտներին/:

3. ԻՆՉԻ՝ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է ԳԱՐՈՒՆԸ/քննարկում/

4. Ո՝վ է գարունը ձեր պատկերացմամբ և որտեղ ենք նրան հանդիպում/հարց-պատասխան, անձնավորում/

5. Ընթերցել Հովհաննես Շիրազի <<Գարնանամուտ>> բանաստեղծությունը՝ քննարկելով բովանդակությունը:

3.Բառային աշխատանք

4.Տեքստային աշխատանք

5.Ստեղծագործական ընդունակությունների զարգացման նպատակով արձակի վերածել բանաստեղծությունը:

6.Խմբային աշխատանք/ավարտել անավարտ նախադասությունները/

I խումբ- Ինչ կլիներ, եթե գարունը ուշանար…

II խումբ – Ինչ կլիներ, եթե գարունը նեղանար…

III խումբ-Ինչ կլիներ, եթե գարունը մահանար…

IV խումբ- Ինչ կլիներ, եթե գարունը հավերժ լիներ…

Կշռադատում

Թեման ամփոփվում է կազմելով գարնան անձնագիրը/ անհատական աշխատանք/



Կշռադատում:Դասի արդյունքում աշակերտները գալիս են այն գիտակցության, որ իրենցից յուրաքանչյուրը մի մասն է ՄԱՅՐ ԲՆՈՒԹՅԱՆ, որ գարունը մարդկանց դարձնում է բարի, որ այն

մարդկանց հոգիները լցնում է գարնանային գույներով ու ուրախությամբ, որ գարունն ամենուր է՝ և՛ բնության գրկում, և՛ մեր հոգիներում:

Տնային հանձնարարություն ՝ գրել շարադրություն **<<Դռները բացե՛ք, գարուն է գալիս>>** վերնագրով:

Անդրադարձ

Գնահատում

Եզրակացություն

Թեման ուսումնասիրելիս հանգեցինք այն եզրակացությանը, որ ինտեգրված ուսումնական ծրագիրը շատ արդյունավետ է ուսումնառությունն իրականացնելիս: Այն ուսուցիչներին հնարավորություն կընձեռի անընդհատ կատարելագործվել՝ փնտրելով նոր գաղափարներ ու մոտեցումներ, կհասցնի նրանց նոր որակական մակարդակի:

Աշակերտներին ծրագիրը կօգնի աշխարհի մասին ունենալ ոչ թե մասնատված, այլ ամբողջական պատկերացում՝ ձևավորելով միասնական մոտեցում երևույթի ընկալման, գիտակցման ու յուրացման հանդեպ: Այսպիսի դասերը, որպես կանոն, շատ հետաքրքիր և ուսուցանող են, տպավորիչ, ուստի օգնում են ավելի արագ և դյուրին սերտել թեմաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Մայրենի 5, Երևան, 2015:

2. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Մայրենի 6, Երևան, 2016:

3. «Հայոց լեզու և գրականություն» ծրագրեր. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, Երևան, 2007:

4. Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Երևան, 2009:

5. Սարգսյան Տ., Համակարգչային խաղերը ինտեգրացված ուսուցման գործընթացում, ԿԱԻ, Մանկավարժություն, Երևան,

2011:

6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:

7. Выготский Л.С., Психология развития ребенка, Москва, 2003.

8. Մ. Դավթյան, Ք. Գրիգորյան, Ա. Արնաուդյան, Ա. Զոհրաբյան, Գ. Հովհաննիսյան, Ի. Օհանովա, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2007:

9. https://historyancient.ru/hy/the-chechen-war/pochemu-byli-vvedeny-integrirovannye-uroki-integrirovannye/ 26. 11. 2021, 18:23: